ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2019 թ. օգոստոսի 29-ի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. 2019-2020 ամբիոնի դասաբաշխման մասին:

/Զեկուցող՝ Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Թ. Ազատյան/

2. Համալսարանի գիտ. խորհրդի 2019թ. հուլիսի 3-ի № 4-Լ որոշման մասին:

/Զեկուցող՝ Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Թ. Ազատյան/

3. Ընթացիկ հարցեր

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ողջունեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին, մաղթեց խաղաղ և արդյունավետ աշխատանքային գործունեություն և ուսումնական տարի: Կրկին անգամ շնորհավորեց Պրոֆեսորադասախոսական կազմի մրցույթին դիմած և մրցույթով անցած (3 տարի ժամկետով) ամբիոնի դասախոսների թեկնածություններին:

1. 2019-2020 ուսումնական տարվա ամբիոնի դասաբաշխման և ժամաքանակների բաշխման հետ կապված նշեց, որ եղան կրճատումներ, որը հիմնականում պայմանավորված էր բակալավրիական կրթական համակարգում հատուկ հոգեբանություն, հատուկ մանկավարժություն և հոգեբանություն ն/դ բաժիններ չունենալով: Ինչպես նաև նշեց, որ բակալավրիական ուսուցման համակարգի հեռակա բաժնում տվյալ պահի դրությամբ գործում է միայն հինգերորդ կուրսեր, բացի այդ բակալավրիական ուսուցման համակարգի առկա բաժնում չունենք երկրորդ կուրսեր: Բնականաբար ժամերի այս պակասը առավել նկատելի է լինելու հաջորդ ուսումնական տարում, որտեղ առավել շատ են մասնագիտական առարկաները:

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը նշեց, որ տարբեր պատճառներով ամբիոնի հինգ դասախոս (Մուրադյան Սուսաննա, Ասոյան Լիլիթ, Հարությունյան Գերասիմ, Բաղդասարյան Լիլիթ, Ավագյան Սոֆյա) իրենց աշխատանքային գործունեությունը չեն շարունակելու ֆակուլտետի շրջանակներում: 24 223 ժամից տվյալ ուսումնական տարում ամբիոնն ունի 19 966 ժամ:

Հիմք ընդունելով վերոնշյալը ամբիոնի վարիչը հորդորեց պրոֆեսորադասախոսական անձնակազմին լինել ավելի կազմակերպված, ցուցաբերել ակտիվություն ուսումնական, գիտական, հետազոտական գործունեությանը, հատկապես ուշադրություն դարձնել տպագրումներին, միջոցառումների կազմակերպմանն ու նախաձեռնությանը:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 21-ը, կողմ քվեարկեց 21-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

2. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ներկայացրեց համալսարանի գիտական խորհրդի 2019թ. հուլիսի 3-ի որոշումը, համաձայն որի համալսարանի ռեկտոր պարոն Ռուբեն Միրզախանյանի կողմից հաստատվել է, որ ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի կողմից կատարված բոլոր դիտողությունները պետք է պարտադիր կերպով քննարկվեն ամբիոնի նիստերին և կանխել բոլոր հնարավոր կրկնությունները: Բացի այդ պետք է մինչև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները պետք է ամբիոնի նիստերում քննարկման առարկա դարձնել աշխատանքների ղեկավարների հաղորդումները շրջանավարտների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ, համաձայն որի պաշտպանության երաշխավորել միայն համապատասխան մակարդակ ունեցող աշխատանքները:

Պետք է ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությանը, որպեսզի թույլ չտանք կրկնություններն ու կանխենք բառախաղերը:

Ամբիոնի վարիչը նշեց, որ անհրաժեշտություն կա մասնագիտական առարկաների շրջանակներում մշակել և ներդնել հատուկ դասընթաց գիտական ապարատի վերաբերյալ, որը դասընթացի ձևով առկա է մագիստրատուրայում, սակայն ոչ բակալավրիատում: Համաձայն որի ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից համատեղ քննարկվեց և որոշվեց այն կազմակերպել առաջին կիսամյակում ընթերցվող ընտրովի դասընթացների շրջանակներում, որտեղ չորրորդ կուրսի ուսանողները հնարավորություն կստանան ուսումնասիրել ավարտական աշխատանքի գիտական ուղղվածությունը: Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը նշեց, որ այս պարագայում ևս չենք մոռանում էլեկտրոնային հարթակի մասին, որտեղ ևս պետք է երևա դասընթացի կուռ կառուցվածքը:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 21-ը, կողմ քվեարկեց 21-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

3. Ընթացիկ հարցեր

- Թերեզա Ազատյանը ներկայացրեց մագիստրատուրայի բաշխման ընթացքը, որը կատարվել է ըստ համապատասխան տվյալների, նշվեց, որ հնարավոր է յուրաքանչյուրի ծանրաբեռնվածությանը ավելանա մեկ կամ երկու մագիստրոս ըստ հրամանագրման արդյունքների:

- Սվետլանա Մուրադյանի կողմից կարևորվեց ընտրովի դասընթացների կրկին վերանայելու և համակարգելու անհրաժեշտություն: Կարևորվեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեությունը, հոդվածների և գիտական աշխատանքների տպագրություններին ուշադրություն դարձնելը: Քննարկվեց նաև մագիստրոսների հետ համահեղինակությամբ հոդվածների տպագրման հարցը, որը ցանկալի և պարտադիր է:

- Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դեկան Սիրանուշ Կարապետյանը կարևորեց և ընդգծեց ավարտական աշխատանքների թեմաների ընտրության հարցը, որոնք պետք է փաստեն ուսանողի հմտությունը և ինքնուրույն գործելու կարողությունը: Ընդգծվեց ավարտական աշխատանքների թեմաների ձևակերպման և ուսանողներին ներկայացնելու հրատապությունը, որը պետք է կազմակերպել նախքան ուսանողների պրակտիկայի մեկնարկը:

Ֆակուլտետի դեկան Սիրանուշ Կարապետյանի կողմից շեշտադրվեց ընտրովի դասընթացների կարևորումը, ինքնատիպությունն ու համապատասխանությունը:

Քննարկվեց նաև ներառական կրթության դասընթացի առարկայական փաթեթների վերանայման անհրաժեշտությունը, տերմինաբանության հստակեցումը:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 21-ը, կողմ քվեարկեց 21-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

Նիստի նախագահ՝ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝ Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2019 թ. սեպտեմբերի 18-ի ամբիոնի նիստի

Օրակարգ

4. Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունը:

/Զեկուցող՝ Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Թ. Ազատյան/

5. Պրակտիկայի կազմակերպումն ու կատարելագործումը:

/Զեկուցող՝ Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ. Մարուքյան/

6. Ընթացիկ հարցեր

4. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը կարևորեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ձևակերպման հարցը: Համաձայն որի կարևորեց թեմաների կոնկրետությունն ու հստակությունը: Կարևորվեց նաև շախմատի և թանգարանների հետ կապված թեմաների ընտրության և ձևակերպման անհրաժեշտությունը: Ինչպես նաև կարևորվեց հետազոտական տարրի առկայությունը, որը կարող է լինել նաև ´´case study´´- ի տեսքով, համաձայն որի ավարտական աշխատանք ներկայացնող ուսանողը հետազոտական տարրը կարող է ներկայացնել 2-3 դեպքի ներկայացմամբ:

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը հորդորեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմին լինել հետևողական և չթույլատրել թեմաների որևէ կրկնողություն նախորդ տարիների շրջանակներում:

Բացի այդ կրկին անդրադարձ կատարվեց այն հարցին, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընթացիկ աշխատանքների մասին ղեկավարների կողմից հաղորդումները պետք է ամբիոնի նիստերում քննարկման առարկա դարձնել, որն էլ հիմք կհանդիսանա տվյալ ուսանողին պաշտպանության երաշխավորելու կամ չերաշխավորելու համար:

Կարևորվեց նաև մագիստրոսական թեզերի էլեկտրոնային տեղեկագրերի և տվյալ պահին ուսանողի կատարած աշխատանքի ընթացքի գնահատման համապատասխանությունը: Նշվեց նաև, որ ամբիոնի վարիչի կողմից պարբերաբար լինելու են մագիստրոսների հետ հանդիպումներ, որի ժամանակ ուսումնասիրվելու է ուսանողների կողմից կատարված աշխատանքները:

Ընդգծվեց նաև մինչև ս. թ. սեպտեմբերի 30-ը մագիստրատուրա առաջին կուրսի ուսանողների թեզերի թեմաների ներկայացման անհրաժեշտությունը, համաձայն որի որպես վերջնաժամկետ որոշվեց սեպտեմբերի 26-ը:

Որպես ամփոփում նշվեց, որ ուսումնական վարչությունից ողջունել են նախորդ նիստին կայացրած այն որոշումը, համաձայն որի բակալավր չորրորդ կուրսի ուսանողները ընտրովի դասընթացների ընթացքում պիտի ուսումնասիրեն նախագծային աշխատանք մասնագիտության շրջանակներում, որը ուսանողներին պիտի գիտելիքներ տրամադրի ավարտական աշխատանքների կազմության մասին:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 18-ը, կողմ քվեարկեց 18-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. Պրակտիկայի պատասխանատու Վերա Մարուքյանի կողմից կարևորվեց ուսանողների խմբերի կոմպլեկտավորման խնդիրը, որի հիմնական պատճառը մասնագետների հերթափոխն ու աշխատանքային գրաֆիկն է: Բացի այդ ընդգծվեց ուսանողների պարտականություններն ու պատասխանատվությունները, համաձայն որի ընդգծվեց նաև, որ պետք չէ թույլ տալ ուսանողներին ընդգրկվել այն գործունեության մեջ (օրինակ՝ կերակրել ԿԱՊԿՈՒ երեխաներին), որն իրականում իրենցից չի պահանջվում: Կարևորվեց պրակտիկայի կատարելագործման անհրաժեշտությունը, համաձայն որի մեջբերվեց <<Լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի>> թվով 4 մասնագետների ներկայությունը նախորդ պրակտիկայի պաշտպանությանը, որը միայն օգուտ էր թե՛ ուսանողների, թե՛ մասնագետների համար:

Չափազանց կարևորվեց պրակտիկայի ողջ ընթացքում ուսանողներին կցված մեթոդիստի, մանկավարժի և հոգեբանի կողմից հետևողական լինել թղթապանակների ձևավորմանը ու պահանջված յուրաքանչյուր փաստաթղթի մշակմանը:

Ամբիոնի դասախոս մ. գ. թ. Լուսինե Բաբայանը նաև որպես <<Լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի>> տնօրեն, կարևորեց կրթահամալիրի մասնագետների կողմից ուսանողների գնահատման բաղադրիչների և բնութագրերի համապատասխանության հարցը: Ինչպես նաև այդ տեսանկյունից կարևորվեց գնահատման համապատասխան բաղադրիչների տրամադրման անհրաժեշտությունը կրթահամալիրի մասնագետներին: Լ. Բաբայանը նշեց նաև, որ բակալավր չորրորդ կուրսի ուսանողների պրակտիկայի մեթոդիստի՝ մ. գ. թ. Սվետլանա Մուրադյանի հետ միասին ի օգուտ ուսանողների որոշում է կայացվել յուրաքանչյուր հինգշաբթի օրը թույլատրել ազատ շրջել կրթահամալիրում, օգտվել գրադարանից, ուսուցչանոցից, որը համալրված է համակարգիչներով և կատարել ուսումնասիրություններ իրենց ավարտական աշխատանքների թեմաների շրջանակներում: Ինչպես նաև դա ի օգուտ է կրթահամալիրին, քանի որ այդ օրը համընկնում է լինում բակալավր երրորդ կուրսի ուսանողների շարունակական պրակտիկայի հետ:

Կարևորվեց նաև ուսանողների, դասախոսների հետ համատեղ քննարկումների, լրացուցիչ հանդիպումների հարթակի վերաբերյալ ժամանակացույցի ստեղծման անհրաժեշտությունը, որը կրկին կծառայի պրակտիկայի կատարելագործմանը:

Բացի վերը ներկայացվածից, ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը նշեց, որ հատկապես անհրաժեշտություն կա հստակեցնելու հոգեբանների գործառույթները պրակտիկայի շրջանակներում: Ինչպես նաև ընդգծվեց, որ պահանջ կա ներկայացնելու բակալավր երրորդ և չորրորդ կուրսի ուսանողների պրակտիկայի վերահսկողության ժամանակացույց, որը արդեն կազմվել և ներկայացվել է համաձայն որի պրակտիկայի պատասխանատուն, ամբիոնի վարիչն ու ֆակուլտետի դեկանը կլինեն համապատասխան հաստատություններում:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 18-ը, կողմ քվեարկեց 18-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի վարիչ՝ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝ Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2019 թ. հոկտեմբերի 21-ի ամբիոնի նիստի

Օրակարգ

7. Բակալավրիատի ավարտական աշխատանքի կատարման ընթացքի մասին:

/Զեկուցող՝ Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Թ.Ազատյան, գիտական ղեկավարներ/

8. Բակալավր 3-րդ և 4-րդ կուրսերի ընթացիկ պրակտիկայի մասին:

/Զեկուցող՝ Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ. Մարուքյան/

9. Ընթացիկ հարցեր:

1. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ներկայացրեց նախորդող ռեկտորատի նիստի ընթացքում բակալավրիատի ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների ձևակերպումների քննարկման հարցը: Նշեց, որ ուսումնագիտական գծով պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանի կողմից կատարվել է յուրաքանչյուր ֆակուլտետի կողմից ներկայացված յուրաքանչյուր թեմայի մանրամասն քննարկում, նախորդ տարիներին միևնույն ֆակուլտետների կողմից ներկայացված թեմաների հետ համեմատում, առկա խնդիրների վերհանում:

Թ. Ազատյանը նշեց, որ համաձայն ռեկտորի՝ Ռուբեն Միրզախանյանի, հրահանգի ամբիոնը հրատապ պետք է կազմակերպի երկու նիստ, որի ընթացքում պետք է քննարկվեն ավարտական աշխատանքներների ու մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը, խնդրահարույց դեպքերը:

Ամբիոնի վարիչը կարևորեց և կրկին անգամ հորդորեց գիտական ղեկավարներին յուրաքանչյուր նիստի ընթացքում բացի բանավոր ներկայացումից, գրավոր ներկայացնել հաշվետվություններ, ուսանողների կատարած աշխատանքների մասին՝

տրամադրելով մանրամասն տվյալներ հանդիպումների, կատարվող աշխատանքների ընթացքի, խնդրահարույց դեպքերի մասին:

Այնուհետև խոսքը տրվեց գիտական ղեկավարներին, ովքեր բանավոր և գրավոր տարբերակով մանրամասն ներկայացրեցին ավարտական աշխատանքների կատարման ընթացքը, կազմակերպվող աշխատանքները, քննարկվեցին ուսանողների հետ հանդիպումների քանակը: Դասախոսների կողմից բարձրաձայնվեց գրականություն տրամադրելու հարցը, որը ուսանողների կողմից հնչում է որպես պահանջ, որ պետք է տրամադրի ղեկավարը: Քննարկումների արդյունքում որոշվեց, որ ղեկավարը կարող է օգնել ուսանողին գրականության հարցում, սակայն դա չի ենթադրում, որ թեմայի շրջանակներում պահանջվող ողջ գրականությունը պետք է տրամադրի ղեկավարը: Գրականություն որոնումը, հավաքագրումն ու վերլուծությունը ևս ներառվում է ուսանողի ուսումնասիրությունների ու ինքնուրույն աշխատանքների մեջ:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 21-ը, կողմ քվեարկեց 21-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

2. Պրակտիկայի պատասխանատու Վերա Մարուքյանը ներկայացրեց բակալավր 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկայի ընթացքի մասին: Սահմանված կարգի և ներկայացված ժամանակացույցի կատարվում է վերահսկողություն համապատասխան հաստատություններում: Մանրամասն ներկայացվեց չորրորդ կուրսի ուսանողների մանկավարժական պրակտիկայի ընթացքը, էլեկտրոնային հարթակում ցուցաբերվող ակտիվությունը: Վ. Մարուքյանը հորդորեց ղեկավարներին, հոգեբաններին և մեթոդիստներին սահմանված կարգով և համապատասխան ժամաքանակով ներկայանալ հաստատություններ:

Վ. Մարուքյանը և ամբիոնի վարիչ Թ. Ազատյանը ընդգծեցին և կարևորեցին ուսանողների թղթապանակների կազմելու ընթացքի վերահսկողությունը, ինչպես նաև բուհում կազմակերպվող պրակտիկայի հանդիպումները, որին բոլոր ղեկավարների և հոգեբանների ներկայությունը պարտադիր է:

Որպես խնդրահարույց դեպք Վ. Մարուքյանը նշեց, այն որ սուրդոմանկավարժություն բակալավր կրթական ծրագրի ուսանողները ներկա պահին պրակտիկան անցնում են <<Լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր>>-ում, որը ընթանում է բնականոն, սակայն ցանկություն ունեն պրակտիկան նաև Արաբկիրի <<Վատ լսող երեխաների վերականգնողական կենտրոն>>-ում անցկացնելու համար, որը ուսանողներին հնարավորություն կընձեռի համեմատություններ կատարելու, ստացված գիտելիքները ամբողջացնելու համար:

Հաջորդ խնդրահարույց դեպքը, որը ներկայացրեց Վ. Մարուքյանը, պայմանավորված է օլիգոֆրենոմանկավարժություն երրորդ կուրսի ուսանողների հետ, ովքեր իրենց շարունակական պրակտիկան անցնում են Երևանի թիվ 92 մանկապարտեզում, որը միջանձնային հարաբերությունների և առկա խնդրահարույց իրավիճակի պահով հավանաբար կշարունակվի մեկ այլ հաստատությունում: Ներկայացված հարցը պարտադիր կերպով կքննարկվի և կհամաձայնեցվի ֆակուլտետի դեկանի, պրակտիկայի վարչության հետ:

Ընթացքը ընդհանուր առմամբ կարելի է գնահատել դրական:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 21-ը, կողմ քվեարկեց 21-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

Հատուկ մանկավարժության և հոգեբանության

ամբիոնի վարիչ՝ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝ Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2019 թ. հոկտեմբերի 25-ի ամբիոնի նիստի

Օրակարգ

1.Մագիստրոսական թեզերի աշխատանքի կատարման ընթացքի մասին:
/Զեկուցող՝ Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Թ. Ազատյան, գիտական ղեկավարներ/

2.Բակալավր 3-րդ, 4-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերի ընթացիկ պրակտիկայի մասին,
/Զեկուցող՝ Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ. Մարուքյան/

3.Ընթացիկ հարցեր

1. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ներկայացրեց օրակարգի առաջին հարցը՝ մագիստրոսական թեզերի աշխատանքների կատարման ընթացքի քննարկումը: Կարևորվեց կազմակերպվող աշխատանքներին հետևողական լինելը, քանի որ համաձայն ներկայիս հրահանգի ամբիոնը և ֆակուլտետը պետք է ուսանողի կատարած աշխատանքը երաշխավորի պաշտպանության:

Այնուհետև խոսքը տրվեց գիտական ղեկավարներին, ովքեր բանավոր և գրավոր տարբերակով մանրամասն ներկայացրեցին մագիստրոսական թեզերի (I և II կուրսեր) կատարման ընթացքը, կազմակերպվող աշխատանքները: Դասախոսները հանգամանորեն ներկայացրեցին մագիստրատրոսական աշխատանքների կատարման ընթացքները, նշվեց նաև հոդվածների կազմության ուղղությամբ լուրջ հետևողական աշխատանքները:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

2. Պրակտիկայի պատասխանատու Վերա Մարուքյանը ներկայացրեց բակալավր 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկայի ընթացքի մասին: Ներկայացվեց համապատասխան հաստատություններում կազմակերպվող վերահսկողությունների արդյունքները: Քննարկվեց երրորդ և չորրորդ կուրսի ուսանողների

մանկավարժական պրակտիկայի ընթացքը, էլեկտրոնային հարթակում ցուցաբերվող ակտիվությունը: Վ. Մարուքյանը հորդորեց ղեկավարներին, հոգեբաններին և մեթոդիստներին սահմանված կարգով և համապատասխան ժամաքանակով ներկայանալ հաստատություններ:

Վ. Մարուքյանը նշեց, որ օլիգոֆրենոմանկավարժություն երրորդ կուրսի ուսանողները, ովքեր իրենց շարունակական պրակտիկան ի սկզբանե անցնում էին Երևանի թիվ 92 մանկապարտեզում, որը միջանձնային հարաբերությունների և առկա խնդրահարույց իրավիճակների պատճառով դադարեցվեց, ֆակուլտետի դեկանի և պրակտիկայի վարչության հետ համատեղ քննարկումների արդյունքում որոշվեց, որ կշարունակեն <<Լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում>>:

Ընթացքը ընդհանուր առմամբ կարելի է գնահատել դրական:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցեր

- Ամբիոնի վարիչ Թ. Ազատյանը ներկայացվեց և քննարկվեց ՀՊՄՀ-ի և «Со-единение» չտեսնող-չլսողների աջակցության հիմադրամի և Ակադեմիա «Со-единение» (БАНО «Ясенева Поляна», Академия «Со-единение»)-ի հետ համատեղ հոկտեմբերի ս. թ. 28-ից-30-ը կազմակերպվող պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման աշխատանքները:
- Ամբիոնի դասախոս Սիփան Ասատրյանը կարևորելով նոյեմբերի 13-ը որպես <<Չտեսնողների միջազգային օր>> և միտք հայտնեց կազմակերպելու խաղ մրցույթ միջոցառում, որին ընդգրկված կլինեն տիֆլոմանկավարժություն բաժնի ուսանողները:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի վարիչ՝ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝ Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2019 թ. նոյեմբերի 29-ի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ամբիոնի հայցորդների հաշվետվություն

/Զեկուցող ամբիոնի հայցորդներ/

2. Google Classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման մասին

/Զեկուցող դասախոս Մարինե Մկրտչյան/

3. Ընթացիկ հարցեր

2. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը անցնելով օրակարգի առաջին հարցին ընդգծեց, որ ամբիոնն ունի թվով յոթ հայցորդ, ովքեր ներկա են հաշվետվությամբ, միևնույն ժամանակ ամբիոնն ունի ժամկետը լրացած (Մկրտչյան Մարինե, Գրիգորյան Անի) երկու հայցորդներ, և ևս մեկ հոգի՝ Լիդա Բալաբեկյանը, վերցրել է տարեկետում:

Ամբիոնի վարիչ Թ. Ազատյանը հայցորդներին խնդրեց հնարավորինս մանրամասն ներկայացնել հաշվետվություն միայն 2019 թվականին կատարած աշխատանքների մասին: Իսկ ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին հորդորեց լինել ակտիվ, կատարել հարցադրումներ, որոնք միմիայն կլինեն ի շահ հայցորդների և իրենց ղեկավարների:

Խոսքը տրվեց ամբիոնի՝ 2016 թվականին ձևակերպված հայցորդ Քրիստինե Ազարյանին: Հայցորդը ներկայացրեց <<Թույլ տեսնող կրտսեր դպրոցականների գրի տեսողագրաֆիկական խանգարումների կանխարգելման միջոցներ և մեթոդները>> խորագրով (գիտական ղեկավար՝ մ.գ.թ., դոցենտ Էլլա Կաֆյան) աշխատանքի ուղղությամբ 2019թվականին կատարած աշխատանքները: Համաձայն որի հայցորդը հանձնել է թեկնածուական մինիմում փիլիսոփայություն առարկայից,

թեկնածուական մինիմում ինֆորմատիկայից, նախապես մշակված հարցաթերթիկների միջոցով անցկացրել է սոցիոլոգիական հարցում տարրական դասարանների ուսուցիչների, հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի բարձր կուրսի ուսանողների և մագիստրոսների հետ: Անցկացրել է գրավոր աշխատանքներ թույլ տեսնող կրտսեր դպրոցականների տեսողական հնարավորությունների ուսումնասիրման նպատակով: Ատենախոսական աշխատանքի թեմայի շրջանակներում տպագրվել է գիտական հոդված, իսկ ևս մեկը հանձնված է տպագրության:

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը հայցորդին խնդրեց մանրամասնել, թե երբ և որ կուրսերի ուսանողների հետ է իրականացվել հանդիպումները:

Լսեցին 2016 թվականի հայցորդ Գայանե Բալասանյանի <<Ծանր աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ինքնասպասարկման հմտությունների ձևավորման միջոցները և մեթոդները>> (գիտական ղեկավար՝ մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Ազարյան) խորագրով ատենախոսության շուրջ կատարած աշխատանքները: Հայցորդը ներկայացրեց 2019 թվականին կատարած աշխատանքները, համաձայն որի ուսումնասիրել և վերլուծել է Խարբերդի մասնագիտացված մանկատան հետազոտվողների հոգեբանամանկավարժական տվյալները, ամփոփել և համակարգել է թվով 113 հատուկ մանկավարժների, դաստիարակների, դայակների սոցիալական հետազոտման արդյունքները թեմայի վերաբերյալ: Հայցորդի կողմից հրատարակվել է ուսումնամեթոդական ուղեցույց – ձեռնարկ ներառական կրթություն իրականացնող ուսուցիչների համար, հրատարակման է ներկայացվել մեկ գիտական հոդված, ինչպես նաև հայցորդի նախաձեռնությամբ դաստիարակների և ծնողների համար կազմակերպվել է դասընթաց <<Ֆունկցիոնալ ուսուցում>> խորագրով: Հայցորդը մասնակցել է խորացված դասընթացի:

Հարցադրումների արդյունքում հայցորդը հիմնավորեց ծնողների համար կազմակերպած և անցկացրած դասընթացի և իր ատենախոսական աշխատանքի թեմայի կապը:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կամարնիկ Գևորգյանը հայցորդին խնդրեց ավելի մանրամասն ներկայացնել, թե ինչ է հասկանում

ինքնասպասարկում ասելով, և իր աշխատանքում հատկապես ինքնասպասարկման կարողությունների որ կողմերն է կարևորում:

Լսեցին 2016 թվականի հայցորդ Տաթև Գուլքանյանի <<Տեսողության խանգարում ունեցող երեխաներին դպրոցական կրթությանը նախապատրաստելու միջոցներն ու մեթոդները>> (գիտական ղեկավար՝ մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Ազարյան) խորագրով ատենախոսության շուրջ կատարած աշխատանքները: Համաձայն որի 2019 թվականի ուսումնառության ընթացքում ուսումնասիրել է տեսողության խանգարում ունեցող երեխաների դպրոցական կրթության նախապատրաստմանն ուղղված նախադպրոցական ծրագրերը, պլանները և կատարել է տեսական վերլուծություն, ինչպես նաև ուսումնասիրել է տեսողության խանգարում ունեցող երեխաների դպրոցի ուսուցման աշխատանքների դպվածքն ընտանիքում: Հայցորդի կողմից մշակվել է հարցաշարեր դաստիարակների, ծնողների և բարձր կուրսի ուսանողների իրազեկվածության մակարդակի վերլուծության համար, որի հիման վրա տպագրման է ներկայացվել մեկ գիտական հոդված, ինչպես նաև թեմայի շրջանակներում մշակվել է մեթոդիկա, որի արդյունքները վերլուծելուց հետո կներկայացվի տպագրության:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Սարատիկյանը նշեց, որ հատուկ կրթության ոլորտում բացակայում են հատուկ նախադպրոցական հաստատությունները, իսկ հայցորդը նշեց, որ ուսումնասիրել է նախադպրոցական ծրագրեր, հետևաբար արդյոք այդ փաստը հայցորդին չի խանգարել և որտեղ է տվյալ գործընթացն իրականացվել:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արաքսյա Սվաջյանը հայցորդին հորդորեց անպայման ուշադրություն դարձնել նախադպրոցական չափորոշիչների վերլուծությանը, քանի որ թեման վերաբերում է նախադպրոցական տարիքին:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սոնա Դավթյանը հայցորդին խնդրեց մանրամասնել և սեղմ ներկայացնել իր կողմից մշակած մեթոդիկան, որը նախատեսվում է հանձնել տպագրության:

Լսեցին ամբիոնի 2017 թվականի հայցորդ Անի Թադևոսյանի <<Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների ծնողների աջակցության կազմակերպման հոգեբանամանկավարժական պայմանները>> (գիտական ղեկավար՝ մ. գ. թ, դոցենտ Արաքսյա Սվաջյան) խորագրով ատենախոսության շուրջ 2019 թվականին կատարած աշխատանքները: Շարունակվել է գիտամեթոդական գրականության ուսումնասիրությունը, վերլուծությունը, մշակվել է հարցարաններ վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների ծնողների համար, մասնակցել է մի շարք սեմինարների, թրենինգների: Տպագրման է հանձնվել մեկ գիտական հոդված, մշակման փուլում է գտնվում ևս երկու հոդված թեմայի շրջանակներում:

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը խնդրեց փոքր ինչ մանրամասնել, և ներկայացնել, թե ինչ կապ և դրական ազդեցություն են ունեցել այն սեմինարներն ու թրենինգները, որոնց մասնակցել է հայցորդը:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Սարատիկյանը կարևորեց հայցորդի թեմայի բովանդակությունը և հորդորեց հստակեցնել, թե վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների ծնողների աջակցության կազմակերպման ուղիները, կազմակերպվող աշխատանքների ընտրության սկզբունքները:

Լսեցին 2016 թվականի հայցորդ Հայկուհի Ադամյանի <<Սովորողի կրթական կարիքի գնահատումը որպես անհատական ուսուցման պլանավորման կարևորագույն նախապայման>> (գիտական ղեկավար՝ մ. գ. թ, դոցենտ Արաքսյա Սվաջյան) խորագրով ատենախոսության շուրջ 2019 թվականին կատարած աշխատանքները: Հաշվետու տարվա ընթացքում ամբողջությամբ ավարտել է ատենախոսական աշխատանքի առաջին գլուխը, որն իրենից ներկայացնում է գիտամեթոդական գրականության մեջ հետազոտվող հիմնախնդրի լուսաբանվածության աստիճանը և վերլուծությունը և այլն: Ուսումնասիրվել է <<կրթության առանձնահատուկ պայմանների կարիք>> հասկացությունը և սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման հոգեբանական չափանիշները, ուսումնասիրվել և վերլուծվել է առողջապահական համաշխարհային կազմակերպության ֆունկցիոնալության միջազգային դասակարգման կիրառումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և անհատական ուսուցման պլանավորման գործընթացներում

միջազգային փորձը: Հստակեցվել է հետազոտական համակազմի ընտրության սկզբունքները, առանձնացվել է հետազոտական համակազմը, իրականացվել է հետազոտվողների բժշկական և կրթական փաստաթղթերի մանրամասն ուսումնասիրություն և վերլուծություն: Նախատեսվում է մշակել անհատական ուսուցման պլաններ հետազոտված երեխաների համար: Թեմայի շրջանակներում մշակվել և հանձնվել է տպագրության երկու գիտական հոդված: Մասնակցել է վերապատրաստումների թեմայի շրջանակներում:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Սարատիկյանը գնահատելով կատարված աշխատանքները, հայցորդին հորդորեց ավելի հստակ ձևակերպել աշխատանքի նպատակը և համահունց կազմակերպել հետագա աշխատանքները:

Լսեցին երկրորդ տարվա հայցորդ Անի Շահբազյանի <<Ասպերգերի համախտանիշով կրտսեր դպրոցականների հետ իրականացվող աշխատանքների կազմակերպման մանկավարժական պայմանները>> (գիտական ղեկավար՝ մ. գ. թ, դոցենտ Արաքսյա Սվաջյան) խորագրով ատենախոսության շուրջ կատարած աշխատանքները: 2019 թվականի ընթացքում հանձնել է որակավորման քննություններ մասնագիտական, օտար լեզու, գիտական հետազոտությունների մեթոդաբանություն, տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ առարկաներից: Մասնակցել է վերապատրաստման դասընթացների, իրականացրել է հետազոտություններ թեմայի շրջանակներում, որի արդյունքում մշակվել է մեկ գիտական հոդված, որը հանձնված է տպագրության: Ամփոփվել է ատենախոսության առաջին գլուխը, աշխատանքներ են տարվում աշխատանքի երկրորդ գլխի վերջնական ամփոփման ուղղությամբ:

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը հայցորդին խնդրեց ներկայացնել աշխատանքի նպատակը և վարկածը:

Որոշեցին ամբիոնի կողմից հնչեցված բոլոր դիտարկումները հայցորդները ընդունեն ի գիտություն, իսկ նրանց կողմից ներկայացված հաշվետվությունը ամբիոնը համարեց բավարար և ատեստավորեց նիստին ներկա գտնվող հայցորդներին:

(քաղվածքները կցվում են արձանագրությանը)

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 17-ը, կողմ քվեարկեց 17-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. Ամբիոնի դասախոս, էլեկտրոնային հարթակի պատասխանատու՝ Մարինե Մկրտչյանը Google Classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման մասին իր զեկույցում նշեց, որ անհրաժեշտ է հետևողական լինել առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների տեղադրման գործընթացին, որպեսզի մեկ ֆայլով չտեղադրվի, այլապես այն ամբողջական չի երևում, անհրաժեշտ է նաև հետևել հանձնարարությունների, հայտարարությունների տեղադրման կարգին: Մարինե Մկրտչյանը հորդորեց դասախոսներին հետևողական լինել արդյոք հարթակին բոլոր ուսանողներն են կցված: Անհրաժեշտ է նաև հետևողական լինել գնահատվող առաջադրանքներին, որոնք պետք է ուսանողին տրվի հստակ ժամանակահատվածով, կառուցվածքով, ձևաչափով, որը ժամանակի լրանալուն պես պարտադիր պետք է մեկ շաբաթվա կտրվածքում գնահատվի և հետ վերադարձվի ուսանողին: Անհրաժեշտ է հետևողական լինել նաև հեռակա ուսուցման համակարգին:

Որոշեցին՝

- Ամբիոնի որոշմանը համաձայն երկրորդ կիսամյակում դասախոսական նյութը յուրաքանչյուր դասախոս կտեղադրի կամ ամբողջությամբ, կամ յուրաքանչյուր դասից հինգ օր առաջ՝ առանձին թեմաներով, սակայն ամբողջը տեղադրելու դեպքում պարտադիր յուրաքանչյուր դասից հինգ օր առաջ պետք է տեղադրի հայտարարությունը:
- Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի համատեղ որոշմամբ Google Classroom էլեկտրոնային հարթակում երկրորդ կիսամյակում կրկին յուրաքանչյուր առարկայից տրամադրել ուսանողներին մեկ պարտադիր գնահատվող առաջադրանք և համարել այն ընթացիկ ստուգման բաղադրիչի 20-ից-30%-ը հաշվի առնելով առարկայի առանձնահատկությունները:
- Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից կներկայացվի իրենց կողմից կարդացվող առարկայի բովանդակային

փոփոխությունների վերաբերյալ դիտարկումներ, ինչպես նաև կքննարկվի ցանակացած առաջարկ էլեկտրոնային հարթակը բարելավելու ուղղությամբ և կներկայացվի համալսարանի համապատասխան ստորաբաժանում:

- Համարել բավարար Google Classroom էլեկտրոնային հարթակում առկա դասընթացների գործառույթների իրականացման ընթացքի կատարված աշխատանքները, որոնք պետք է պարբերաբար քննարկվեն հետագա նիստերի ընթացքում:

(քաղվածքը կցվում է արձանագրությանը)

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 17-ը, կողմ քվեարկեց 17-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցեր

- միջանկյալների և քննական հարցաշարերի հաստատում,
- ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը նշեց, որ առաջիկայում նախատեսվում է կազմակերպել ֆակուլտետի դասախոսների վերապատրաստումներ, որոնք հավանաբար կմեկնարկեն ս. թ. դեկտեմբերի 9-ից:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 17-ը, կողմ քվեարկեց 17-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝ Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության

Ամբիոնի 2019 թ. դեկտեմբերի 26-ի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարների հաշվետվություն

/Զեկուցող գիտական ղեկավարներ/

2.Պրակտիկայի ամփոփման, թղթապանակների պաշտպանության մասին

/Զեկուցող Վերա Մարուքյան/

3. Ընթացիկ հարցեր

1. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը անցնելով օրակարգի առաջին հարցին ավարտական

աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարներին առաջարկեց բացի ներկայացված հաշվետվությունները, բանավոր կերպով հանգամանորեն անդրադառնալ և ներկայացնել խնդրահարույց դեպքերը:

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարներից շատերը որպես խնդրահարույց դեպքեր նշեցին որոշ ուսանողների պասիվությունը: Միևնույն ժամանակ ընդգծվեցին որոշ ուսանողների անուններ, ովքեր անկախ ղեկավարների հորդորների և պնդումների չեն հանդիպել ղեկավարներին, չեն մասնակցել կազմակերպված քննարկումներին, չեն ներկայացրել համապատասխան նյութեր, ինչպես նաև մշակումներ թեմաների շրջանակներում:

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը հորդորեց ղեավարներին լինել հետևողական, անհրաժեշտության և խիստ ծայրահեղության դեպքում գրել զեկուցագրեր համապատասխան ուսանողների համար:

Թերեզա Ազատյանը մագիստրոսական թեզերի ղեկավարներին հորդորեց հետևողական լինել մագիստրոսների հետ համահեղինակությամբ գիտական

հոդվածներ մշակելու և տպագրելու հարցում, որը չափազանց կարևորվեց ամբիոնի վարիչի կողմից:

Ամբիոնի վարիչի կողմից անդրադարձ կատարվեց նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կազմության հարցին, համաձայն որի ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի համատեղ քննարկումների արդյունքում որոշվեց առաջարկել և սահմանել ավարտական աշխատանքների կազմության համար 30 էջ առանց հավելվածի, իսկ 35՝ հավելվածով: Միևնույն ժամանակ մագիստրոսական թեզերի կազմության համար որոշվեց առաջարկել և սահմանել 55-60 էջ:

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը նշեց, որ ամբիոնի որակի պատասխանատու Սոնա Դավթյանի կողմից ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի կազմության ընդհանուր ձևաչափից կառանձնացվի և հունվարի ամբիոնի նիստին կներկայացվի հիմնական կետերն ու շեշտադրումները, որը քննարկելուց հետո կներկայացվի ուսանողներին:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 19-ը, կողմ քվեարկեց 19-ը, դեմ՝0,

ձեռնպահ՝0:

2. Պրակտիկայի պատասխանատու մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Վերա

Մարուքյանը ներկայացրեց պրակտիկայի ամփոփման, թղթապանակների պաշտպանության մասին հաշվետվություն: Համաձայն որի Վ. Մարուքյանի կողմից ընդգծվեց, որ խնդրահարույց դեպքեր չեն գրանցվել: Նշվեց, որ կազմվել և ներկայացվել է քննաշրջանի ժամանակացույց, թղթաբանության և կատարողական ակտերի հետ կապված աշխատանքները ամփոփվել են, խնդրահարույց դեպքեր չեն գրանցվել:

Վերա Մարուքյանի կողմից շնորհակալական խոսք հնչեցվեց պրակտիկաների բոլոր ղեկավարներին, մեթոդիստներին և հոգեբաններին միասնական, համախմբված և հետևողական աշխատանքների կազմակերպման համար:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 19-ը, կողմ քվեարկեց 19-ը, դեմ՝0,

ձեռնպահ՝0:

Հատուկ մանկավարժության և հոգեբանության

ամբիոնի վարիչ՝ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝ Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7.

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության

ամբիոնի 2020 թ. հունվարի 29-ի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. 2019-2020 ուս տարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերի քննարկում,

հաստատում, Google classroom –ի 1-ին կիսամյակի մշտադիտարկման արդյունքների քննարկում:

/Զեկուցող՝

մանկավարժական գիտությունների թեկնածու դոցենտ Թերեզա Ազատյան

հատուկ մանկավարժության ֆ հոգեբանության

ամբիոնի դասախոս Մարինա Մկրտչյան/

2. Բակալավր 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկայի արդյունքների քննարկում, հաստատում:

/Զեկուցող՝

մանկավարժական գիտությունների թեկնածու դոցենտ Վերա Մարուքյան/

4. Ընթացիկ հարցեր

1. Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը

անդրադառնալով օրակարգի առաջին հարցին նշեց, որ հունվար ամիսը հաշվետու ամիս է առաջին կիսամյակի համար, համաձայն որի որակի վարչությունից պահանջ կա կիսամյակի կտրվածքով մինչև հունվարի 24ը ներկայացնելու Google classroom-ի առաջին կիսամյակի մշտադիտարկման արդյունքները: Ինչպես յուրաքանչյուր նիստի ժամանակ, այնպես էլ հերթական անգամ Թերեզա Ազատյանի կողմից կարևորվեց Google classroom-ի ուղեցույցում ներկայացված ցուցիչներին հետևողական լինելը, մասնավորապես,

առարկայական տրոհումների և փաթեթների առկայությունը, գնահատվող հանձնարարությունների գնահատման գործընթացի վերահսկումը, համապատասխան դասընթացին ժամանակին ուսանողների կցված լինելու փաստը և այլն: Համապատասխան ուղեցույցի շրջանակներում առանձնացվել է 14 հիմնական ցուցիչ, որի հիման վրա էլ դուրս է բերվել միջինացված միավոր, ըստ որի արդյունքները կարելի է գնահատել գոհացուցիչ: Ներկայացվեցին և քննարկվեցին 2019-2020 ուս տարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերը: Թերեզա Ազատյանը նշեց նաև, որ կիսամյակի վերջում հնարավոր է լինեն պահանջներ կապված առարկայական փաթեթների բովանդակային տվյալների հետ կապված, հետևաբար անհրաժեշտ է լինել հետևողական, կրկին վերանայել առարկայական փաթեթների բովանդակությունը, ինչպես նաև հնարավոր է կազմել աշխատանքային նեղ մասնագիտական խմբեր և համատեղ քննարկել առարկայական փաթեթների բովանդակային կողմերը: Անհրաժեշտ է նաև հատուկ ուշադրություն դարձնել ներառական կրթության առարկայական փաթեթներին, քանի որ առկա փոփոխությունները ենթադրում են նման աշխատանքների կազմակերպում:

Ի լրումն Թերեզա Ազատյանի խոսքի՝ Մարինա Մկրտչյանը նշեց, որ ազդարարելով 2-րդ կիսամյակի մեկնարկը, մինչև փետրվարի 7-ը Google classroom հարթակում պիտի տեղադրվեն առարկայական փաթեթներն ու տրոհումները: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել առարկայական նկարագրերին, պետք է տեղադրել նոր ձևաչափով, առարկայական նկարագրերն ու տրոհումները տեղադրել առանձին ֆայլերով, յուրաքանչյուր շաբաթ պարտադիր է հանձնարարությունների ներկայացումը հարթակում, անհրաժեշտ է հետևել որ բոլոր ուսանողները կցված լինեն հարթակին, թեմաները պետք է համապատասխանեն թեմատիկ տրոհմանը և այլն:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝0:

2. Պրակտիկայի պատասխանատու Վերա Մարուքյանը նշեց, որ ավարտվել են բակալավր 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկայի թղթապանակի պաշտպանությունները: Համաձայն որի անբավարար գնահատականներ չեն արձանագրվել, սակայն եղել են ցածր գնահատականներ: Բարձր գնահատելով սուրդոմանկավարժություն 3-րդ կուրսի ուսանողների պաշտպանությունները՝ Վերա Մարուքյանը նշեց, որ բավականին զիջել են սուրդոմանկավարժություն 4-րդ և տիֆլոմանկավարժություն 3-րդ կուրսի ուսանողների պատրաստվածությունն ու պաշտպանությունը, որը իրականում կարելի է համարել բավարար:

Վերա Մարուքյանը հորդորեց ամբիոնի դասախոսներին, հատկապես պրակտիկայի ղեկավարներին, մեթոդիստներին և հոգեբաններին, լինել հետևողական կազմակերպվող աշխատանքներին որպեսզի կանխվեն առկա խնդիրները:

Վերա Մարուքյանը նաև փաստեց, որ իր դրական ազդեցություն է ունեցել նաև համալսարանում կազմակերպված հանդիպումներն ու քննարկումները, որին մասնակցել են ինչպես ուսանողները, այնպես էլ պրակտիկայի ղեկավարները, մեթոդիստները, հոգեբաններն ու պրակտիկայի վարչության ներկայացուցիչները:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝0:

3. Ընթացիկ հարցեր

- Լսեցին հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ասիստենտ մանկավարժական գիտությունների թեկնածու Անահիտ Դաշյանի դոցենտի գիտական կոչում ստանալու վերահաստատման հարցը: Համաձայն որի որոշեցին վերահաստատել և միջնորդել ֆակուլտետի խորհրդին Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ասիստենտ մանկավարժական գիտությունների թեկնածու Անահիտ Դաշյանի դոցենտի գիտական կոչում ստանալու հարցը:
- Լսեցին հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս հոգեբանական գիտությունների թեկնածու Ալինա Մանուկյանի դոցենտի գիտական կոչմանը ներկայացնելու հարցը: Համաձայն որի Ալինա Մանուկյանը թեկնածուական աշխատանքի պաշտպանությունից հետո ամբիոն է ներկայացրել թվով հինգ գիտական հոդված և մեկ մեթոդական ձեռնարկ: Արդյունքում որոշեցին միջնորդել ֆակուլտետի խորհրդին հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս հոգեբանական գիտությունների թեկնածու Ալինա Մանուկյանին դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը:
- Ներկայացվեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պահանջների ուղեցույց-բրոշուր, որը մշակվել է հիմք ընդունելով 2019 թվականի նոյեմբեր ամսին գիտխորհրդի կողմից ներկայացված պահանջները: Ներկայացված ուղեցույց-բրոշուրը նախատեսված է ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների համար, որտեղ առանձնացվել են մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների հիմնական պահանջները, որը կազմակերպվող աշխատանքները կդարձնի ավելի դյուրին և հասանելի:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

Հատուկ մանկավարժության և հոգեբանության

ամբիոնի վարիչ՝ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝ Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8.

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության ֆ հոգեբանության

ամբիոնի 2020 թ. փետրվարի 5-ի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. «Օլիգոֆրենոմանկավարժություն», «Սուրդոմանկավարժություն», «Տիֆլոմանկավարժություն» մասնագիտացումների միասնական մասնագիտության միավորելու, «Նախադպրոցական հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության վերականգնելու հարցը:

/Զեկուցող՝

մանկավարժական գիտությունների թեկնածու դոցենտ Թերեզա Ազատյան/

2. Ընթացիկ հարցեր

1.1 Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը կարևորելով օրակարգի առաջին հարցը, ընդգծեց որ հարցը պետք է քննարկվի ֆակուլտետի ընդլայնված նիստում, ապա պետք է ներկայացվի համալսարանի գիտական խորհրդին: Քննարկվեց 2021-2022 ուսումնական տարվանից բակալավրի կրթական ծրագրի ընդունելության հայտադիմումում «Օլիգոֆրենոմանկավարժություն», «Սուրդոմանկավարժություն», «Տիֆլոմանկավարժություն» մասնագիտացումների <<Հատուկ մանկավարժություն>> մասնագիտության տարբերակով միասնական ներկայացնելու հարցը: Ըստ քննարկման արդյունքների, համապատասխան մասնագիտացման շրջանակներում ուսանողներն առաջին կուրսում մեկ կրթաբլոկով կանցնեն մասնագիտական և համահամալսարանական առարկաներ, ապա երկրորդ կուրսի առաջին կիսամյակից ուսանողները հնարավորություն կունենան ընտրություն կատարելու և սովորելու երեք /օլիգոֆրենոմանկավարժություն, տիֆլոմանկավարժություն, սուրդոմանկավարժություն/ նեղ մասնագիտական կրթաբլոկներով:

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը նշեց, որ վերոնշյալ հարցը համաձայնեցվել է կրթական բարեփոխումների և որակի վարչության պետ՝ Մկրտիչ Ավագյանի հետ:

Որոշեցին - մասնագիտությունը և հայտը ներկայացնել <<Հատուկ մանկավարժություն>> մասնագիտության տարբերակով, որի շրջանակներում ուսանողները ընդունվում են մեկ ուսումնական պլանով, ապա երկրորդ կուրսից ուսանողներին ընձեռվում է հնարավորություն սովորելու երեք ենթակրթաբլոկներով, համաձայն որի հնարավորություն է ընձեռվում կատարել նեղ մասնագիտական ընտրություն /օլիգոֆրենոմանկավարժություն, տիֆլոմանկավարժություն, սուրդոմանկավարժություն/ և շարունակելու կրթությունը համապատասխան մասնագիտությամբ:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 15-ը, կողմ քվեարկեց 15-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.2 Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանն անդրադառնալով օրակարգի առաջին հարցի երկրորդ ենթահարցին նշեց, որ ֆակուլտետում նախկինում եղել է մասնագիտություն <<Շտկողական հատուկ մանկավարժություն (նախադպրոցական)>>, որը հետագայում վերանվանվել է <<Նախադպրոցական հատուկ մանկավարժություն և հոգեբանություն>>: Թերեզա Ազատյանը ընդգծեց ներկայացված մասնագիտության կարևորությունը, արդիական լինելը և առաջարկեց վերականգնել համապատասխան մասնագիտությունը ֆակուլտետի բակալավրիական կրթական համակարգում՝ առաջարկելով «Նախադպրոցական հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» անվանումը:

2. Ընթացիկ հարցեր

- ներկայացվեց, ռեկտորատի նիստին կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի պետ Անուշ Սարգսյանի զեկույցը առաջին կիսամյակի Google Classroom էլեկտրոնային հարթակի կառավարման մասին: Համաձայն որի ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ցուցաբերած արդյունքները գոհացուցիչ են եղել:

- ներկայացվեց, որ ս. թ. փետրվար ամսին Google Classroom էլեկտրոնային հարթակի վերաբերյալ իրականացվելու է ուսանողների անանուն հարցում: Հետևաբար Թերեզա Ազատյանը հորդորեց դասախոսներին լինել հետևողական, և հավուր պատշաճ կազմակերպել Google Classroom էլեկտրոնային հարթակի աշխատանքները, քանի որ փետրվարի 10-ից մեկնարկելու է առկա ուսուցման համակարգի ուսանողների ուսումնական գործընթացը:

- առաջարկվեց հեռակա առաջին և երկրորդ կուրսի ուսանողների ուսուցման բարելավման աշխատանքների հետ կապված փոփոխել առաջին կիսամյակում դասերին ներկայացվող ժամկետները:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 15-ը, կողմ քվեարկեց 15-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

Նիստի նախագահ՝ **Թերեզա Ազատյան**

Նիստի քարտուղար՝ **Սվետլանա Մուրադյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9.

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2020 թ. մարտի 30-ի ամբիոնի առցանց նիստի

/ առցանց նիստի հղումը՝ https://meet.google.com/krx-gtqt-cou /

Օրակարգ

1. Google meet էլեկտրոնային հավելվածի դասերի իրականացման ընթացքի մասին

Զեկուցող ամբիոնի վարիչ, դոցենտ Թերեզա Ազատյան

2. Առկա բակալավր 4-րդ, հեռակա բակալավր 5-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերի նախնական լսումների մասին

Զեկուցող ամբիոնի վարիչ, դոցենտ Թերեզա Ազատյան

3. Տեղեկատվություն պրակտիկայի մասին

Զեկուցող պրակտիկայի պատասխանատու, դոցենտ Վերա Մարուքյան

4. Ընթացիկ հարցեր

1. Օրակարգի առաջին հարցի հետ կապված ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը նշեց, որ ստեղծված արտակարգ իրավիճակի պայմաններում ֆակուլտետը նույնպես անցել է առցանց ուսուցման: Հետևաբար դասերն իրականացվում են Google meet էլեկտրոնային հավելվածի միջոցով: Առցանց տարբերակով դասերի կազմակերպման նախնական փուլում ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից լուրջ խնդիրներ չեն արձանագրվել: Գործընթացի կազմակերպման հետ կապված մասնակի խնդիրներ են ունեցել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Ազարյանը և բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսորի պ/կ Երջանիկ Գևորգյանը, որը հարթվել է:

Ամբիոնի վարիչ Թ. Ազատյանը հորդորեց դասախոսներին լինել հետևողական, ըստ դասացուցակի և ներկայացված ժամանակացույցերի ճիշտ ժամանակին առցանց

տարբերակով կազմակերպել դասերը, միջանկյալ ստուգումները, գնահատվող առաջադրանքների առաջադրումն ու ստուգումը: Կարևորվեց նաև առցանց տարբերակով դասերի տեսաձայնագրությունների և/կամ նկարների ապահովումն ու ամբիոնին տրամադրումը, քանի որ յուրաքանչյուր ուրբաթ օր ամբիոնի կողմից հաշվետվություն է ներկայացվում համալսարանի էլեկտրոնային կառավարման բաժին: Միևնույն ժամանակ նշվեց, որ ռեկտորատի նիստի ժամանակ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի պետ Անուշ Սարգսյանի կողմից ֆակուլտետների շարքում առանձնացվել է այն առաջին եռյակը, որը ապահովել է կապն ու առցանց տարբերակով դասերի ակտիվ կազմակերպումը: Համաձայն որի նշվել է «Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ», «Բանասիրական ֆակուլտետ» և «Սկզբնական կրթության ֆակուլտետ»:

Թերեզա Ազատյանը նշեց, որ յուրաքանչյուր օր ժամը 20:00 – 21:00 հնարավորություն է ընձեռված առցանց տարբերակով միանալու կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի պետ Անուշ Սարգսյանի հետ կազմակերպվող քննարկումներին, որտեղ յուրաքանչյուրը կարող է ստանալ առցանց դասերի կազմակերպման վերաբերյալ իրեն հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները:

Ամբիոնի դասախոս Մարինե Մկրտչյանը նշեց, որ յուրաքանչյուր դասի ավարտին համապատասխան հարթակում պետք է տեղադրել կա՛մ դասի ձայնագրությունը, կա՛մ նկարները: Ինչպես նաև պետք է հայտարարություն բաժնում նշել դասի ավարտի և հաջորդ դասի օրվա, ժամի մասին, որը պետք է հնարավորինս համապատասխանի դասացուցակին:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 22-ը, կողմ քվեարկեց 22-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը նշեց, որ մինչ երկրում հայտարարված արտակարգ դրությունը ամբիոնի կողմից ներկայացվել է նախնական պաշտպանությունների ժամանակացույց, որը մեկնարկում է ապրիլի 14-ից: Հետևաբար, եթե մարտի 15-ից վերականգնվի ուսումնական գործընթացը, ապա բնականոն հունով կընթանա նաև նախնական պաշտպանությունները: Սակայն

ամբիոնի վարիչ Թ. Ազատյանը կարևորեց նախնական լսումների կազմակերպման անհրաժեշտությունը: Հետևաբար անհրաժեշտ է սահմանել ժամանակացույց, համաձայն որի յուրաքանչյուր ղեկավար առցանց տարբերակով պետք է լսի իր ուսանողներին /բակալավրի առկա և հեռակա կրթական ծրագիր, մագիստրոսի կրթական ծրագիր/, հավաքագրի աշխատանքները, կազմի եզրակացություններ:

Համատեղ քննարկումների արդյունքում որոշվեց ս. թ. մինչ ապրիլի 10-ը ամբիոն ներկայացնել առկա բակալավր 4-րդ, մագիստրատուրա 2-րդ կուրսերի, իսկ մինչ ապրիլի 14-ը հեռակա բակալավր 5-րդ կուրսերի նախնական լսումների հիման վրա ղեկավարների կողմից կազմված եզրակացությունները:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 22-ը, կողմ քվեարկեց 22-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. Պրակտիկայի պատասխանատու Վերա Մարուքյանը ներկայացրեց բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսերի և մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին կուրսերի պրակտիկայի կազմակերպման գործընթացը: Համաձայն որի նշեց, որ նախորդ շաբաթ հանդիպում-քննարկում է եղել ամբիոնի վարիչի, դեկանի, ապա նաև պրակտիկայի վարչության պետի՝ Վահան Սարգսյանի հետ: Քննարկվել է վերոնշյալ կուրսերի պրակտիկայի կազմակերպման գործընթացը, համաձայն որի բակալավր կրթական ծրագրի 3-րդ կուրսերի պրակտիկայի գործընթացի կազմակերպումը հետաձգվել է և կապված է արտակարգ իրավիճակով:

Քննարկումների արդյունքում որոշվել է ապրիլի 6-ից երեք շաբաթվա կտրվածքով առցանց տարբերակով կազմակերպել մագիստրատուրա 1-ին կուրսերի պրակտիկան, որի ընթացքում մագիստրոսները կմիանան իրենց թեզերի ղեկավարների կողմից դասավանդվող առարկաների հարթակներին: Ամբիոնի մասնագետի կողմից կստեղծվեն հարթակները բոլոր մագիստրոսների համար:

Վ. Մարուքյանը դասախոսներին հորդորեց լինել ակտիվ, համապատասխան հարթակներում տեղադրել պրակտիկայի առարկայական նկարագրերը, շաբաթական տրոհումները, ինչպես նաև դասի ողջ ընթացքում մագիստրոսների հետ համատեղ կցված մնալ դասավանդվող առարկայի հարթակին, մինչ դասի մեկնարկը հարթակում տեղադրել հայտարարություններ /դասավանդվող առարկա, կուրս, ժամ,

առցանց հղում/, իսկ յուրաքանչյուր դասի ավարտին հարթակում տեղադրել դասի ընթացքից նկարներ, քննարկումների արդյունքներ:

Վ. Մարուքյանը նշեց նաև, որ ապրիլի 15-ից ուսումնական գործընթացի առցանց տարբերակով շարունակելու պարագայում բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների պրակտիկան կմեկնարկի առցանց տարբերակով, որի պարագայում ուսանողները այնուամենայնիվ պետք է ունենան թղթապանակներ և պատրաստ լինեն պաշտպանության:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 22-ը, կողմ քվեարկեց 22-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի վարիչ՝ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝ Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10.

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2020 թ. ապրիլի 22-ի ամբիոնի առցանց նիստի

/ առցանց նիստի հղումը՝ https://meet.google.com/deq-zxmf-xqo /

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական պաշպանությունների անցկացման ձևաչափի և ժամանակացույցի մասին

Զեկուցող ամբիոնի վարիչ, դոցենտ Թերեզա Ազատյան

2. 3-րդ կուրսերի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների մասին

Զեկուցող պրակտիկայի պատասխանատու, դոցենտ Վերա Մարուքյան

3. Ընթացիկ հարցեր

4. Մինչ օրակարգի առաջին հարցին անդրադառնալը ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը շնորհակալություն հայտնեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմին, մասնավորապես, պրակտիկայի պատասխանատու Վերա Մարուքյանին, ամբիոնի մասնագետ Անուշ Թորոսյանին, էլեկտրոնային հարթակի պատասխանատու Մարինե Մկրտչյանին առցանց տարբերակով աշխատանքներն արդյունավետ և հավուր պատշաճ կազմակերպելու համար:

Թերեզա Ազատյանը նշեց, որ համաձայն նախարարության, ինչպես նաև ռեկտորատի նիստի որոշման այն ֆակուլտետները, որոնք պատրաստ կլինեն հրապարակային պաշտպանության, գործընթացը կկազմակերպվի մայիսի 25-ից, իսկ մյուսների համար գործընթացը կմեկնարկի հունիսի 1-ից: Մոտ օրերին պատրաստ կլինի ժամանակացույցը բոլոր ավարտական կուրսերի համար: Նախնական տվյալներով պաշտպանությունների խորհրդի անդամները կաշխատեն համալսարանից, իսկ ուսանողները կմիանան նախապես իրենց տրամադրված հղումներով: Հարթակը հասանելի կլինի բոլոր ցանկացողների, այդ թվում նաև

ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գիտական ղեկավարների համար:

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանն անդրադարձավ նախնական պաշտպանություններին և կրկին անգամ հիշեցրեց, որ գործընթացը մեկնարկում է ապրիլի 27-ից, որի հետ կապված ամբիոնի մասնագետի կողմից կստեղծվեն համապատասխան հարթակներ: Ուսանողներից պահանջվում է ավարտուն տեսքի բերել աշխատանքները, քանի որ նախնական պաշտպանություններից հետո ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը, գրախոսություններն ու ղեկավարների կարծիքները պետք է տեղադրվեն համապատասխան հարթակներում: Ամբիոնի վարիչը հորդորեց ամբիոնի բոլոր դասախոսներին նախնական պաշտպանությունների հարցում լինել առավել ակտիվ՝ ապահովելով մասնակցություն:

Թերեզա Ազատյանն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի բոլոր ղեկավարներին հորդորեց լինել հետևողական ուսանողների վարձավճարների հարցում, քանի որ այն ուսանողները, ովքեր վարձավճարների հետ կապված խնդիրներ կունենան, պարզապես հնարավորություն չեն ունենա դուրս գալու հրապարակային պաշտպանության:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 17-ը, կողմ քվեարկեց 17-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. Պրակտիկայի պատասխանատու Վերա Մարուքյանը ներկայացրեց բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսերի պրակտիկայի կազմակերպման գործընթացը: Նշվեց, որ պրակտիկայի մեկնարկը տրվելու է ապրիլի 27-ին, որի մասին տեղեկացվել են բոլոր ուսանողները: Համաձայն որի ապրիլի 23-ին կկազմակերպվի պրակտիկայի կոնֆերանսը, որին պարտադիր է բոլոր ղեկավարների (<<օլիգոֆրենոմանկավարժություն>> 3-րդ կուրս՝ Լիլիթ Սարատիկյան, <<սուրդոմանկավարժություն>> 3-րդ կուրս՝ Անահիտ Դաշյան, <<տիֆլոմանկավարժություն>> 3-րդ կուրս՝ Մարինե Մկրտչյան) և ուսանողների մասնակցությունը:

Վ. Մարուքյանը դասախոսներին հորդորեց լինել ակտիվ, համապատասխան հարթակներում տեղադրել պրակտիկայի առարկայական նկարագրերը, շաբաթական տրոհումները, ինչպես նաև ուսանողներին տրամադրել համապատասխան տեղեկատվություն նախատեսվող աշխատանքների վերաբերյալ:

Ամբիոնի մ.գ.թ. դասախոս Լուսինե Բաբայանը, ով նաև հանդիսանում է <<Լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր>> ՊՈԱԿ-ի տնօրեն առաջարկեց հնարավորություն ընձեռել սուրդոմանկավարժություն բաժնի 3-րդ կուրսի և օլիգոֆրենոմանկավարժություն բաժնի 3-րդ (օժանդակ դասարան) կուրսի ուսանողներին առցանց տարբերակով որոշակի ժամանակահատվածով կցվելու (օրինակ վեց անգամ՝ շաբաթը մեկ օր) դասարաններին և այդ կերպ կազմակերպել իրենց 6 շաբաթյա պրակտիկան:

Հարցի շրջանակներում առաջարկ հնչեց ամբիոնի դոցենտ մ.գ.թ. Ինեսսա Հարությունյանի կողմից, ով նաև հանդիսանում է <<Փոխօգնության կենտրոն>>-ի տնօրեն: Համաձայն որի առաջարկվեց սուրդոմանկավարժություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողներին առցանց միանալու իրենց՝ ծնողներին, շահառուներին տրամադրվող խորհրդատվական առցանց հանդիպում-քննարկումներին, որը նույնպես բավականին արդյունավետ կարող է լինել ուսանողների համար:

Տիֆլոմանկավարժություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողների պրակտիկայի կազմակերպման պարագայում առաջարկվեց խոսել և քննարկել <<Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց>>-ի տնօրենի հետ: Նշվեց որ դպրոցում մեկնարկել է Բրայլյան գրով աուդիոգրքերի, դասագրքերի ստեղծման բուռն գործընթաց, որը կրում է շարունակական բնույթ և կազմակերպվող աշխատանքներին միգուցե կարող են մասնակից դառնալ նաև համապատասխան բաժնի ուսանողները:

Ամբիոնի դասախոսների համատեղ քննարկումների արդյունքում որոշվեց ընդունել ի գիտություն հնչած առաջարկները և ներկայացնել պրակտիկայի վարչությանը:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 17-ը, կողմ քվեարկեց 17-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6. Ընթացիկ հարցեր

- Բանավոր քննությունները կազմակերպվելու են առցանց տարբերակով, որի հետ կապված պետք է համապատասխան հարթակներում տեղադրվեն (եթե դեռ չեն տեղադրվել) քննական հարցաշարերը, նույն սկզբունքով պատրաստվեն քննական տոմսերը, որը քննությունից առնվազն մեկ շաբաթ առաջ սնագիր տարբերակով պետք է տեղադրվի հարթակում, որը տեսանելի չի լինի ուսանողներին նախքան քննությունը, քանի դեռ դասախոսը չի հրապարակել այն: Քննող դասախոսը, ընթերական և ուսանողները նշված օրը, նշված ժամին պետք է միանան համապատասխան հղումով, ուսանողները պետք է ընտրեն քննական տոմսի համարը, որից հետո ստանալով քննական տոմսերը պետք է սկսեն աշխատել: Յուրաքանչյուր ուսանողի պատասխանից հետո պետք է գնահատել ուսանողին և հետ վերադարձնել այն: Բանավոր քննության ողջ ընթացքը պետք է ձայնագրվի և քննության ավարտից հետո պետք է տեղադրվի հարթակում:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 17-ը, կողմ քվեարկեց 17-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի վարիչ՝ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝ Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11.

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2020 թ. 28.04. - 19.05.-ի ամբիոնի առցանց նիստերի

/ Նախնական պաշտպանությունների հղումներ՝

մագիստրատուրա կրթական ծրագրի ուսանողներ՝ https://meet.google.com/mzv-xhai-iod

բակալավր կրթական ծրագրի ուսանողներ՝ https://meet.google.com/vbz-yaqu-yzx /

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական պաշտպանությունների լսումներ, քննարկումներ և հաստատում

Զեկուցող՝ մագիստրատուրա կրթական ծրագրի և բակալավր կրթական ծրագրի ավարտական կուրսերի ուսանողներ

7. Ս. թ. 28.04 - 19.05 ընկած ժամանակահատվածում 11 խմբով կազմակերպվել է մագիստրատուրա կրթական ծրագրի և բակալավր կրթական ծրագրի (առկա և հեռակա ուսուցման համակարգի) ավարտական կուրսերի թվով 168 ուսանողների առցանց նախնական պաշտպանությունները: Ներկայացված 168 ուսանողից բակալավր կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի ուսանող են 67-ը, մագիստրատուրա կրթական ծրագրի՝ 44-ը, իսկ բակալավր կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի՝ 57-ը (կից ներկայացված է պաշտպանությունների գրաֆիկը):

Վերոնշյալ բոլոր ուսանողները, ղեկավարները, ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը նախապես ծանոթացել են համալսարանի կողմից մշակված ուղեցույցին և նախնական պաշտպանությունների գրաֆիկին, ապա համապատասխան օրերին և ժամերին կցվել են ամբիոնի մասնագետի կողմից նախապես ստեղծված հղումով:

Աշխատանքները առավել կանոնանկարգված իրականացնելու համար ամբիոնի կողմից ստեղծվել են 3 միթ հղումներ՝ համապատասխանաբար մագիստրատուրա կրթական ծրագրի, բակալավր կրթական ծրագրի առկա

ուսուցման համակարգի և բակալավր կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի ուսանողների համար:

Առցանց ձևաչափով իրականացված նախնական պաշտպանությունների ընթացքում հիմնական դժվարությունները դիտվել են բակալավր կրթական ծրագրի հեռակա 5-րդ կուրսի ուսանոնղների մոտ, ովքեր առաջին անգամ էին օգտվում քլասրում հարթակից, սակայն դժվարությունները կրում էին տեխնիկական բնույթ և հաղթահարելի էին: Մասնավորապես դժվարանում էին միաժամանակ ներկայացնել զեկուցումն ու տեսասահիկը, որի պարագայում զեկուցողը հիմնականում դիմում էր ընկերների օգնությանը, դժվարանում էին մուտք գործել քլասրում հարթակով, միանուկ էին միթով:

Կիսամյակի ընթացքում ամբիոնում կար 3 խնդրահարույց աշխատանք, ինչի վերաբերյալ պարբերաբար գիտական ղեկավարները զեկուցել էին ամբիոնի նիստերին, սակայն նախնական լսումներից հետո, այդ ուսանողները կարողացան ավարտին հասցնել և հավուր պատշաճ ներկայացնել աշխատանքը նախնական պաշտպանությանը: <<Հատուկ հոգեբնաություն>> մագիստրատուրայում առկա էր մեկ հաշմանդամություն ունեցող ուսանող, ով իր հնարավորությունների սահմանում կարողացավ հաղթահարել նախնական պաշտպանության շեմը: Բակալավր կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի երկու ուսանող, ովքեր նաև բուժհաստատության աշխատակից էին, նախնական պաշտպանությանը միացել են աշխատավայրից, այդ իսկ պատճառով երկուսի դեպքում էլ առկա է եղել կապի խնդիր:

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանի կողմից յուրաքանչյուր խմբի նախնական պաշտպանությունների ավարտին բացի արդյունքների ամփոփումից, կրկին անգամ ներկայացվել է պաշտպանությունների հիմնական պահանջներն ըստ ուղեցույցի, համաձայն որի ուսանողներին հորդորել է միանալ պարտադիր դեկանատի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեներով: Ամբիոնի վարիչը հորդորել է բոլոր ուսանողներին լինել հետևողական ամբիոնի դասախոսների կողմից արված մասնագիտական և տեխնիկական բոլոր դիտարկումներին:

Ընդհանուր առմամբ արդյունքները գնահատվել են գոհացուցիչ, բոլոր ուսանոնղները ներկայցել են տեսասահիկներով, սահմանվել էր ռեգլամենթ, ուսանողներից և ոչ մեկը չի ունեցել համակարգչի հետ կապված խնդիր:

Բոլոր ուսանոնողները ամբիոնի կողմից երաշխավորվել են հրապարակային պաշտպանության: Համատեղ քննարկումների արդյունքում որոշվեց նախնական պաշտպանությունների արդյունքները համարել գոհացուցիչ

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 19-ը, կողմ քվեարկեց 19-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի վարիչ՝ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝ Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 12.

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2020 թ. մայիսի 22-ի ամբիոնի առցանց նիստի

/ առցանց նիստի հղումը՝ https://meet.google.com/nbk-hekd-zrq /

Օրակարգ

2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական պաշտպանությունների արդյունքների վերլուծություն, քննարկում, հաստատում

Զեկուցող ամբիոնի վարիչ, դոցենտ Թերեզա Ազատյան

2. 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի Google classroom էլ. հարթակի մշտադիտարկման արդյունքների քննարկում, հաստատում

Զեկուցող դասախոս Մարինե Մկրտչյան

3. Ընթացիկ հարցեր

8. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ներկայացրեց նախնական պաշտպանությունների ընթացքը, համաձայն որի նշվեց, որ ողջ ընթացքին մասնակցել է թվով 168 ուսանող, որից 44-ը եղել են մագիստրոսական կրթական ծրագրի ավարտական կուրսի ուսանողներ: Ամբիոնի վարիչը հատկապես կարևորեց այն փաստը, որ ողջ ընթացքում որևէ արտառոց դեպքեր չի գրանցվել, հրապարակային պաշտպանության չերաշխավորվող ուսանողներ նույնպես չեն եղել: Փոխարենը եղել են աշխատանքներ (օրինակ՝ բակալավր կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգ՝ 2 աշխատանք, բակալավր կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգ՝ 3 աշխատանք), որոնց հետ կապված կատարվել է դիտարկումներ և ուսանոնղերին առաջարկվել է վերանայել ու հետևողական լինել կատարված դիտարկումներին, առաջարկություններին:

Թ. Ազատյանը կրկին անգամ շեշտեց, որ հրապարակային պաշտպանության դուրս եկող ուսանողներից պահանջվում է պետական քննություններին պարտադիր կերպով առցանց միանալ համալսարանի կողմից տրամադրված անհատական էլէկտրոնային հասցեներով, ինչպես նաև համակարգչի միջոցով: Նշվեց նաև, որ

պաշտպանության դուրս եկող ուսանողները պետք է հնարավորինս արագ ավարտուն տեսքի բերեն աշխատանքները, քանի որ մինչ հրապարակային պաշտպանությունը, այն է մինչ ս. թ. մայիսի 29-ը, ղեկավարներից պահանջվում է ամբիոնի մասնագետի կողմից ստեղծված հարթակներում տեղադրել ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը, ներկայացումները, հարակից ամբիոններից գրախոսություններն ու ղեկավարների կարծիքները: Ներկայացված ֆայլերը պետք է վերնագրել հայատառ և համապատասխանաբար ուսանողի անուն ազգանունով:

Թերեզա Ազատյանն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի բոլոր ղեկավարներին հորդորեց լինել հետևողական ուսանողների վարձավճարների հարցում, քանի որ այն ուսանողները, ովքեր վարձավճարների հետ կապված խնդիրներ կունենան, պարզապես հնարավորություն չեն ունենա դուրս գալու հրապարակային պաշտպանության:

Համատեղ քննարկումների արդյունքում որոշվեց նախնական պաշտպանությունների ընթացքը համարել գոհացուցիչ

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 18-ը, կողմ քվեարկեց 18-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի Google classroom էլ. հարթակի մշտադիտարկման արդյունքները ներկայացրեց ամբիոնի դասախոս Մարինե Մկրտչյանը: Մ. Մկրտչյանը նշեց, որ յուրաքանչյուր շաբաթ կատարվում է մշտադիտարկում, որի արդյունքները ներկայացվում է ամբիոնի վարիչին, ինչպես նաև կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի պետ Անուշ Սարգսյանին:

Կարևորվեց դասի մեկնարկից առաջ հայտարարության տեղադրումը (համապատասխան ժամ, առցանց հղում, քննարկվող թեմա ըստ շաբաթական տրոհման), ինչպես նաև դասի ավարտին տեսաձայնագրությունների և/կամ դասից նկարների տեղադրումը: Նշվեց նաև, որ առանձին դեպքերում եղել են որոշակի վրիպակներ, որը հստակեցվել է դասախոսների հետ: Ամփոփելով կատարված

աշխատանքները՝ առաջարկվեց 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի Google classroom էլ. հարթակի մշտադիտարկման արդյունքները գնահատել դրական:

Համատեղ քննարկումների արդյունքում որոշվեց 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի Google classroom էլ. հարթակի մշտադիտարկման արդյունքները գնահատել գոհացուցիչ

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 18-ը, կողմ քվեարկեց 18-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցեր

- Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը կարևորեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ակտիվությունը ֆակուլտետի, ինչպես նաև ամբիոնի գործունեության մասին տեղեկատվության առցանց տարածման հետ կապված, որն իր ուրույն դերն ունի դիմորդների իրազեկվածության ապահովման պարագայում: Հիմնահարցի կարևորման տեսանկյունից Թ. Ազատյանը նշեց, որ այսուհետ առցանց դաշտում գործելու է <<Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի>> ֆեյսբուքյան էջը, որի պատասխանատուն է ամբիոնի դոցենտ մ.գ.թ. Ինեսսա Հարությունյանը:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 18-ը, կողմ քվեարկեց 18-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի վարիչ՝ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝ Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 13.

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2020 թ. հունիսի 30-ի ամբիոնի առցանց նիստի

/ առցանց նիստի հղումը՝ https://meet.google.com/krx-gtqt-cou /

Օրակարգ

4. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների արդյունքների քննարկում, հաստատում

Զեկուցող ամբիոնի վարիչ, դոցենտ Թերեզա Ազատյան

5. 2020-2021 ուստարվա ծավալի ծանրաբեռնվածության նախապատրաստական աշխատանքների մասին

Զեկուցող ամբիոնի վարիչ, դոցենտ Թերեզա Ազատյան

6. Ընթացիկ հարցեր

9. Ամբիոնի վարիչ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թերեզա Ազատյանը ներկայացրեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների արդյունքները, համաձայն որի ընդգծվեց, որ ամբիոնը 2019-2020 ուստարվա ընթացքում ունեցել է ընդհանուր առմամբ 169 շրջանավարտ, որից 2-ը եղել են բակալավր կրթական ծրագրի սուրդոմանկավարժություն բաժնի նախորդ տարիների ուսանողներ, իսկ բակալավր կրթական ծրագրի հատուկ հոգեբանություն մասնագիտության երկտարեցի մեկ ուսանող ստացել է անբավարար գնահատական: Համաձայն որի մագիստրատուրա կրթական ծրագրի օլիգոֆրենոմանկավարժություն մասնագիտության միջին գնահատականն է 84,3%, սուրդոմանկավարժություն՝ 92,1% տիֆլոմանկավարժություն՝ 94,6%, հատուկ մանկավարժություն՝ 94,3%, հատուկ հոգեբանություն՝ 86,4%, բակալավր կրթական ծրագրի օլիգոֆրենոմանկավարժություն մասնագիտության միջին գնահատականն է 92,8%, սուրդոմանկավարժություն՝ 93,6% տիֆլոմանկավարժություն՝ 96,4%, ինչպես նաև

հեռակա բակալավր կրթական ծրագրի օլիգոֆրենոմանկավարժություն մասնագիտության միջին գնահատականն է 78,7%, սուրդոմանկավարժություն՝ 78,1% տիֆլոմանկավարժություն՝ 82,9%, հատուկ հոգեբանություն՝ 87,1%, ն/դ հատուկ մանկավարժություն և հոգեբանություն՝ 80,1%:

Թերեզա Ազատյանը հորդորեց դասախոսներին հետագա տարիների ընթացքում էլ ավելի հետևողական լինել ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների և հիմնական բովանդակության համապատասխանությանը: Որպես առավելություն շեշտադրվեց հեռակա բակալավր կրթական ծրագրի ուսանողների առցանց համակարգին դյուրին հարմարվելու և ընդգրկվելու կարողությունը, քանի որ համակարգը անծանոթ էր ուսանողներին: Հաջորդ կարևոր առավելությունը էլեկտրոնային հարթակի անխափան աշխատանքն էր, որում իրենց մեծ դերն ունեցան կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության ներկայացուցիչները, ովքեր նույնպես միացած են եղել պաշտպանությունների հարթակին: Ընդգծվեց նաև ուսանողների կազմակերպված մասնակցությունը, սահմանված ժամանակի պահպանումը, համալսարանի կողմից հատկացված անհատական էլեկտրոնային հասցեներով մուտքի ապահովումը, ներկայացումների առկայությունը, որտեղ իրենց մեծ դերակատարումն ունեն ղեկավարները: Միևնույն ժամանակ նշվեց, որ լինում էին դեպքեր, երբ ուսանողը կապի խնդրի պատճառով ներկայացումը ուղարկում էր համակուրսեցիներից որևէ մեկին, ով էլ իրականացնում էր ցուցադրումը:

Թ. Ազատյանը մեջբերելով պաշտպանական խորհրդի նախագահի խոսքերը ընդգծեց, որ հաջորդ տարիների ընթացքում ցանկալի է էլ ավելի ուժեղացնել հետազոտական աշխատանքների գիտական տարրը, որը ցանկալի կլինի առավել բովանդակալից երևա նաև ավարտական աշխատանքներում:

Այսպիսով, ամբիոնի վարիչ Թ. Ազատյանը առաջարկեց արդյունքները գնահատել գոհացուցիչ:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 19-ը, կողմ քվեարկեց 19-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

10. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը անդրադառնալով օրակարգի երկրորդ հարցին ներկայացրեց 2020-2021 ուստարվա ծավալի ծանրաբեռնվածության նախապատրաստական աշխատանքները: Թ. Ազատյանը նշեց, որ նախկինում ամբիոնն ունեցել է 19947 ժամ, որը սույն ուսումնական տարվա ընթացքում բավականին նվազել է, որը պայմանավորված է թե՛ դիմորդների քանակով, թե՛ երրորդ կուրսի ուսանողներ չունենալու հանգամանքով, թե՛ ներառական կրթություն առարկայի ժամաքանակի նվազմամբ: Ընդգծվեց, որ ուսումնական բաժինը արդեն իսկ տրամադրել է հաստատված ուսումնական պլանները: Ի օգուտ կազմակերպվող աշխատանքների հնարավորություն է ընդձեռվել կիսելու մագիստրոսի կրթական ծրագրի հատուկ հոգեբանություն և հատուկ մանկավարժություն առաջին կուրսերի ընտրովի դասընթացները, որը հնարավորություն կընդձեռի մոտավորապես 300 ժամ խնայելու:

Ամբիոնի վարիչը շնորհակալություն հայտնեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմին համախմբված, կազմակերպված աշխատանքների համար և հորդորեց լինել առավել ակտիվ և շահագրգռված հատկապես հուլիսին, երբ կմեկնարկի ընդունելությունների երկրորդ փուլը:

Ընդհանրացնելով կատարված աշխատանքները ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը առաջարկեց 2020-2021 ուստարվա ծավալի ծանրաբեռնվածության նախապատրաստական աշխատանքները համարել գոհացուցիչ:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 19-ը, կողմ քվեարկեց 19-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցեր

- **ԼՍԵՑԻՆ՝** հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ Արևիկ Խաչատրյանի «Սոցիալ-հոգեբանամանկավարժական ուղեկցումը ներառական կրթության պայմաններում» խորագրով թեկնածուական թեզի թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Ազարյանը, մ.գ.թ. դոցենտներ՝ Թ. Ազատյանը, Զ. Զոհրաբյանը, Լ. Սարատիկյանը, Կ. Սարուխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել «Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի» ամբիոնի հայցորդ Արևիկ Խաչատրյանի «Սոցիալ-հոգեբանամանկավարժական ուղեկցումը ներառական կրթության պայմաններում» խորագրով թեկնածուական թեզի թեման և գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արաքսյա Սվաջյանին:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 19-ը, կողմ քվեարկեց 19-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ **Թերեզա Ազատյան**

Նիստի քարտուղար՝ **Սվետլանա Մուրադյան**